

**Կենդանու ախտաբանաանատոմիական դիախերձման  
Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

**Կենդանու տեսակ.** Սպիտակագլուխ անգղ:

**Կենդանու մականուն.** -

**Կենդանու պատկանելիություն.** Երևանի կենդանաբանական այգի:

**Դիախերձման ժամ և վայր.** “Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն” ՊՈԱԿ-ի մոլեկուլային մակաբուժաբանության լաբորատորիա, 2022թ.-ի հունվարի 13-ին:

**Դիախերձում իրականացնող.** Կ.գ.թ., ավագ գիտաշխատող Օ.Վ. Շչերբակով:

**Անամնեստիկ տյալներ.** Անգղն անկել է 2021թ. հունվարի 7-ին:

**Կլինիկական ախտորոշում.** Չկա:

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

**Արտաքին զննում**

1. Սպիտակագլուխ անգղի դիակ, երիտասարդ արու, կանոնավոր մարմնակազմության, միջին բովածության, պատկած է մեջքի վրա, ծավված թներով և հետին վերջավորություններով:
2. Դիակը սառն է, արտահայտված է մկանների փայտացում:
3. Տեսանելի լորձաթաղանթները չոր են, գունատ: Բերանի և քթի խոռչներում առկա է թանձր անգույն լորձի զգալի քանակություն:
4. Փետուրները խամրած են, փոկվում են դժվարությամբ:
5. Ենթամաշկային բջջանքում առանձնահատկություններ չեն նկատվում:
6. Մկաններում, ոսկորներում, հողերում և կապաններում առանձնահատկություններ չեն նկատվում:

**Ներքին զննում.**

1. Մարմնի խոռոչի օրգանների անատոմիական դիրքը կանոնավոր է, խոռոչում ազատ հեղուկ չկա: Շճային ծածկույթներն առանց առանձնահատկությունների; արյունատար անոթները զգալիորեն արյունալեցված:
  2. Թոքամզի թերթիկները և օդափարկերի պատերը՝ առանց առանձնահատկությունների: Սրտապարկում և պերիկարդի խոռոչում առանձնահատկություններ չկան: Սիրտը չափերով փոքր-ինչ մեծացած է, սրտամկանի գույնն առանց առանձնահատկությունների, խտաստիճանը՝ էլաստիկ:
  3. Բերանի և քթի խոռոչներում, ըմպանում, կոկորդում և շնչափողում առկա է թանձր անգույն լորձ: Շնչափողի լորձաթաղանթը այտուցված է, կարմրած:
- Կտնառքում կերային զանգվածներ չկան; լորձաթաղանթը բաց վարդագույն է, առանց առանձնահատկությունների:
- Թոքերում և բրոնխներում առանձնահատկություններ չկան:

4. Փայծաղ առանձնահատկություններ չունի:

Լյարդը բալա-շագանակագույն է, հավասարաչափ գունավորված, պատկերը չափավոր արտահայտված է: Եզրերը կլորացած են, խտաստիճանը փափկած չի:

Երիկամները դեղնաադյուսագույն են, պատկերը՝ չափազանց արտահայտված, խտաստիճանը՝ փափկած:

Մկանային և գեղձային ստամոքսի լորձաթաղանթը բաց վարդագույն է, առանց առանձնահատկությունների: Օրգանները պարունակում են քիչ քանակությամբ զանգվածներ: Առկա են կլոր որդեր:

Բարակ և հաստ աղիների լորձաթաղանթը կարմրավուն է, այտուցված, բազմակի կետային արյունազեղումներով: Պարունակյալը հեղուկ է, կարմրա-մոխրագույն: Առկա են նաև հատուկ ենտ կլոր որդեր:

Մերմնարանները՝ առանց առանձնահատկությունների:

5. Գանգային խոռոչը, ուղեղային թաղանթները, գլխուղեղը, հավելյալ ծոցերը՝ առանց առանձնահատկությունների: Քթի խոռոչում առանձնահատկություններում չկան:

6. Ողնաշարում, ուղնուղեղում և ոսկրածուծում առանձնահատկություններ չկան:

## ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

### Ախտաբանաանատոմիական ախտորոշում.

1. Այսպիսով, դիահերձման ժամանակ հայտնաբերվել են հետևյալ ախտաբանաանատոմիական փոփոխություններ.

- ստոմատիտ
- ֆարինգիտ
- լարինգոտրախեիտ  
հյուծվածություն;
- հեպատոմեգալիա;
- հեպատիտ;
- նեֆրիտ;
- կատառահեմորագիկ էնտերոկոլիտ;
- հելմինթոզ:

2. Հատուկ լաբորատոր հետազոտություններ.

Ա. Ստամոքսում և բարակ աղիներում հայտնաբերված ճիճուները որոշվել են որպես *Porrocaecum angusticollae* և *Porrocaecum depressum* (Nematoda: Ascaridiida: Anisakiidae):

Բ. Կրծքի մեծ մկանը հետազոտվել է մանրադիտակի տակ, կոմպրեսոր եղանակով: *Trichinella pseudospiralis* նեմատոդի թրթուրներ չեն հայտնաբերվել:

Գ. Երիկամների ախտահարված հատվացներից կատարվել են քսուք-ապտատպվածքներ, որոնք ներկվել են ըստ Ցիլ-Նիլսենի՝ տուբերկուլոզի հարուցիչը հայտնաբերելու նպատակով: Թթվակայուն մանրէներ, այդ թվում՝ ախտածին միկոբակտերիաներ, չեն հայտնաբերվել:

Դ. Լյարդի կտոր պահվել է սառցարանում՝ հետագա քիմիաթունաբանական հետազոտություն անցկացնելու նպատակով:

3. Հայտնաբերված պատկերը առավել բնորոշ է քրոնիկական թուվանորմանը: Թռչնի մոտ հայտնաբերված ճիճուները չէին կարող հանդիսանալ մահվան պատճառ, սակայն, դրանց առկայության պատճառով օրգանիզմի բնական դիմադրողականությունը զգալիորեն ընկել է, խորացնելով հիմնական հիվանդության ընթացքը: Վերին շնչառական ուղիների և բերանի խոռոչի բորբոքային երևույները նույնպես չէին կարող լուրջ վտանգ ներկայացնել թռչնի կյանքին, դրանք ուղղակի օրգանիզմի բնական դիմադրողականության ընկճման հետևանք էին:

Թռչնի մոտ զարգացել է քրոնիկական թունավորում, որը հանգեցրել է էնտերիտի, կոլիտի, ինչպես նաև հեպատիտի և նեֆրիտի զարգացմանը: Չարգացող երիքամային անբավարարությունը ահնգեցրեց թռչնի անկմանը: Թույնի բնույթը լաբորատորիայում առկա պայմաններում հնարավոր չէ պարզել:

Հետազոտող՝



Օ.Վ. Շչերբակով

14. 01. 2022թ.

## ՀԱՎԵԼՎԱԾ



**Նկար 1. Մահացած անգղի ընդհանուր տեսքը**



**Նկար 2. Ախտահարված երիկամը**



Նկար 3. Բարակ աղիքում հայտնաբերված կլոր որդերը՝ *Porrocaecum angusticollae*